

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 23-ԻՆ ԺԱՄԸ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

---

**քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

- |                  |                                                                            |
|------------------|----------------------------------------------------------------------------|
| Ա. Աշոտյան       | ՀՀ կրթության և գիտության նախարար                                           |
| Վ. Գաբրիելյան    | ՀՀ ֆինանսների նախարար                                                      |
| Կ. Հարությունյան | ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ                                  |
| Ա. Միրզախանյան   | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ                     |
| Ռ. Թոփչյան       | «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն |
| Ս. Սիմոնյան      | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ        |

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի  
հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգի  
նախագծի մասին

---

(Ա. Աշոտյան, Վ. Գաբրիելյան, Կ. Հարությունյան, Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

**3. Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանին՝

1) լրամշակել ՈԱԱԿ հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգը և հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի նախագծերը, մասնավորապես՝

ա. 6-րդ և 9-րդ կետերը, ըստ որի հավատարմագրման հանձնաժողովը բաղկացած կլինի 11 անդամից, և նախատեսել 4-5 դիտորդ (ուսանող, հրավիրված այլ անձինք)՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Սահմանել հանձնաժողովի անդամների առաջադրման ընթացակարգերը և հանձնաժողովի անդամների նկատմամբ փորձի և

որկավորաման չափանիշները: Փորձագիտական խմբերը նախատեսել ըստ ծրագրային և ենթակառուցվածքային հավատարմագրման,

բ. 8-րդ կետը, ըստ որի հավատարմագրման հանձնաժողովի անդամների ռոտացիան իրականացվի ԱՄՆ-ի սենատի սկզբունքին համապատասխան՝ 3 տարին մեկ անգամ՝ հանձնաժողովի անդամների 1/3-րդի մասով,

գ. 10-րդ կետը, ըստ որի հավատարմագրման հանձնաժողովի նախագահը կընտրվի հանձնաժողովի կազմից,

դ. լրացնել նոր կետ, որով ծրագրային հավատարմագրման համար հոգաբարձուների խորհրդի համապատասխան որոշմամբ կատեղծվեն ոլորտային ենթահանձնաժողովներ,

ե. 13-րդ կետը, ըստ որի հակիրճ ձևակերպմամբ կնշվի փորձագետների բազայում ընդգրկման չափանիշները, ինչպես նաև բազայից ընտրություն կատարելու սկզբունքները,

զ. 17-րդ կետը, ըստ որի հավատարմագրման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնը կհամարվի հոգաբարձուների խորհրդի առաջիկա նիստում: Սահմանել հանձնաժողովի անդամի թափուր տեղի համալրման ընթացակարգ: Ընդ որում, յուրաքանչյուր թափուր պաշտոնի համար կներկայացվի մեկից ավելի թեկնածություն,

է. հստակեցնել 21-րդ կետի ձևակերպումները, մասնավորապես սահմանել, որ նիստի ժամանակ հավատարմագրման հանձնաժողովը, փորձագիտական խմբի կողմից ներկայացված հիմքերի ու զեկույցի, ինչպես նաև ՈԱԱԿ-ի եզրակացության հիման վրա, քննարկում է յուրաքանչյուր չափանիշ և կայացնում է հավատարմագրման վերաբերյալ որոշում՝ քվեարկության միջոցով,

ը. 30-րդ կետը, ըստ որի նախքան հանձնաժողովի նախագահի ընտրությունը նախագահի իրավասությունները, ժամանակավորապես կդրվեն հանձնաժողովի ավագ տարիքի անդամի վրա.

2) ներկայացնել հավատարմագրման հանձնաժողովի նախագահի թեկնածություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ